

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ «Քաղաքացիական Դատավարության Օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Օրենքի Նախագծի

Աիդա Ավանեսյան

Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական Դատավարության Օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը անցել է արդեն Ազգային Ժողովում առաջին ընթերցման փուլը:

Այդ նախագծում, մի շարք այլ փոփոխությունների շարքին, փոփոխության է ենթարկվել Հինգերորդ Ենթաբաժինը՝ «արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու և օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթներ»-ի մասին:

Թեև տրամաբանական է մտածել, որ փոփոխությունների նպատակը ներկայիս գործող օրենքի բարեփոխումը, անորոշությունների հստակեցումը և արբիտրաժային վճիռների հարկադիր կատարման դյուրացումն է եղել, սակայն նախագծի որոշ հոդվածների դրույթները չեն համապատասխանում այդ նպատակին և բարենպաստ լուծումներ չեն առաջադրում ներկայիս առկա հարցերին/բարդություններին: Դրանցից կարևորներին անդրադառնում ենք ստորև:

1-Հոդված 280. Դիմումի քննությունը

1- Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը քննվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունելու **օրվանից երեք ամսվա ընթացքում:**

Տեսակետ. (1) *Երեք ամսվա ժամկետը (ներկա օրենսդրությամբ երկու շաբաթ է) երկար է և չի համապատասխանում արբիտրաժի էությանը, որը սկզբունքորեն նախատեսում է վեճի արագ և վերջնական լուծում:*

(2) *Նաև անհրաժեշտ է նախատեսել, որ դատարանը պետք է արբիտրաժի կայացման կապակցությամբ արված դիմումներին (ինչպես օրինակ չնշանակված արբիտրի նշանակում) արագ, օրինակ 10 օրում, և արտահերթ վարչական նիստում տնօրինություն տա և նման հարցերի տնօրինությունը չներառի իր դատական նիստերի ժամանակացույցի մեջ:*

2- Հոդված 280. Դիմումի քննությունը

4. Դատարանը գործի քննության ժամանակ **իր նախաձեռնությամբ** պարզում է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու՝ «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:

Տեսակետ. «Իր նախաձեռնությամբ» տերմինը, լայն մեկնաբանության դեպքում, կարող է չարաշահվել: Օրինակ՝ եթե կողմերը չեն առարկում արբիտրաժային համաձայնության

վավերականության, դատարանը չպետք է «իր նախաձեռնությամբ» այս հարցի քննությամբ զբաղվի և կամ այդ հիմնավորումով արբիտրաժային վճիռը բեկանի: Թվում է, որ դատարանի այս իրավունքը պետք է սահմանափակել հետևյալով՝

- (1) Եթե վճիռը հակասում է ՀՀ օրենքների պարտադիր նորմերին, և
- (2) Եթե վճիռը հակասում է ՀՀ հանրային կարգին:

3- Հոդված 282. Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու գործով դատարանի որոշումը

5. Դատարանի կայացրած որոշումը կարող է **բողոքարկվել վերաքննիչ դատարան** դրա հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

Տեսակետ. Անհրաժեշտ է հստակեցնել, որ Վերաքննիչ Դատարանի վճիռը ենթակա չէ բողոքարկման Վճռաբեկ Դատարան, քանի որ դրա արդյունքում ոչ թե միայն երկարաձգվում է հարկադիր կատարման ժամկետը այլ նաև ընդհանրապես հարցականի տակ է առնվում արբիտրաժի հիմնական (անվիճարկելիության) սկզբունքը:

Այս անհրաժեշտությունը բխում է նրանից, որ թեև Նախագծի 6-րդ հոդվածը հստակեցնում է, որ արբիտրաժային վճռի առնչությամբ առնված որոշումը «գործն ըստ էության չլուծող դատական ակտ» է, սակայն՝

- (1) Նախագծի 346¹ և 348² հոդվածների նախատեսությունը թույլ է տալիս տրամաբանելու, որ Վերաքննիչ Դատարանի որոշումը (առնված հոդված 282-ի 5-րդ³ մասով բողոքարկման արդյունքում) կարող է բողոքարկելի համարվել Վճռաբեկ Դատարան:
- (2) Առավել հիմնավորման առիթ կարող է հանդիսանալ Վճռաբեկ Դատարանի «Քաղաքացիական գործ թիվ ԸԿԴ/1636/17/15-2016թ.»-ով տրված որոշման այն եզրակացության, որ «... արբիտրաժի վճռի ճանաչման և/կամ հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում դատարանի որոշումը (ինչպես բավարարման այնպես էլ մերժման վերաբերյալ) բողոքարկելիության տեսանկյունից առավել համահունչ է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բնորոշ կարգավորումներին ...»:

4- Հոդված 282. Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու գործով դատարանի որոշումը

7. Այն դեպքում, երբ արբիտրաժի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ է ճանաչվում արբիտրաժային համաձայնության անվավերության հետևանքով, կամ եթե

¹ Հ. 346«Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով քննում է վերաքննիչ դատարանի վերջնական և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները»Ք Այս Հոդվածը փոփոխության է ենթարկել գործող օրենքի 222-րդ Հոդվածը հապավելով «գործն ըստ էության լուծող» տերմինը:

² Հ. 348-Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը 1. Վճռաբեկ բողոքը բերվում է սույն օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված հիմքերով: 2. Նյութական իրավունքի նորմերը համարում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է սույն օրենսգրքի 323-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը: 3. Դատական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է սույն օրենսգրքի 324-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը: 4. Նոր երևան եկած նոր հանգամանքներով վճռաբեկ բողոք բերելու հիմքերը սահմանված են սույն օրենսգրքի 375-րդ և 376-րդ հոդվածներով: . Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա վերջնական դատական ակտն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա սույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:»

³ Հ. 282, 5-րդ մաս՝ «Դատարանի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան դրա հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

նման վճիռը կայացվել է արբիտրաժային համաձայնությանը արբիտրաժին չվերապահված վեճի վերաբերյալ կամ չի համապատասխանում դրա պայմաններին, **կամ արբիտրաժային համաձայնությանը չնախատեսված հարցերով որոշումներ է պարունակում, արբիտրաժային վարույթի կողմերն իրենց վեճը լուծելու համար կարող են դիմել դատարան՝** սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կանոնների պահպանմամբ:

Տեսակետ. Թյուրիմացությունից և չարաշահումից խուսափելու համար անհրաժեշտ է հստակեցնել, որ դատարան դիմելու իրավունքը սահմանափակվում է միայն այն հարցերով, որ արբիտրաժային վճիռը տրված է (1) արբիտրաժին չվերապահված վեճի վերաբերյալ կամ (2) չի համապատասխանում դրա պայմաններին (3) կամ արբիտրաժային համաձայնությանը չնախատեսված հարցերով որոշումներ է պարունակում:

5- Հոդված 284. Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը

4. Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել դատարան **արբիտրաժի վճռի ստանալու պահից երեք տարվա ընթացքում:**

Տեսակետ. Նախագծում անորոշ է մնացել այն հարցը, որ ինչպես պիտի կիրառել այս 3 տարվա ժամկետը եթե արբիտրաժային վճիռը (առանց այն, որ դրա վերաբերյալ կատարողական թերթ տալու դիմում եղած լինի) բողոքարկվում է դատարան և դատարանային վերահասության ընթացքը սկսվում է ավելի երկար քան նախատեսված 3 տարվա ժամկետը (գործնականում անհնարին չէ եթե Վճռաբեկ Դատարան բողոքարկելու հնարավորություն տրվի):

6- Հոդված 285. Դիմումի քննությունը

1. Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը քննվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում **դիմումը վարույթ ընդունելու օրվանից երեք ամսվա ընթացքում:**

Տեսակետ. Երեք ամսվա ժամկետը (ներկա օրենսդրությամբ երկու շաբաթ է) չափազանց երկար է և չի համապատասխանում արբիտրաժի էությանը, որը սկզբունքորեն նախատեսում է վեճի արագ և վերջնական լուծում:

7- Հոդված 285. Դիմումի քննությունը

3. Գործը քննության նախապատրաստելիս դատարանը կարող է արբիտրաժից պահանջել այն **գործով նյութերը, որի կապակցությամբ կատարողական թերթ է հայցվում:**

Տեսակետ. Դատարանի այս իրավունքը հակասում է արբիտրաժի «գաղտնիության» սկզբունքին: Նաև կարող է առիթ տալ դատարանին ծանոթանալու գործի էությանը և կատարողական թերթ տալու իր որոշման մեջ առաջնորդվել (թեկուզ անուղղակիորեն) գործի էության մասին իր դիրքորոշումով: Այս հավանականությունը կանխելու համար կամ պետք է հապավել այս հոդվածի 3-րդ մասն ընդհանրապես կամ սահմանափակել այն նյութերը, որոնք դատարանն իրավունք ունի պահանջելու:

8- Հոդված 287. Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին գործով դատարանի որոշումը

5. Դատարանի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան դրա հրապարակման պահից տասնհինգ օրվա ընթացքում:

Տեսակետ. Անհրաժեշտ է հստակեցնել, որ վերաքննիչ Դատարանի վճիռը ենթակա չէ բողոքարկման Վճռաբեկ Դատարան, քանի որ դրա արդյունքում ոչ թե միայն երկարաձգվում է հարկադիր կատարման ժամկետը այլ նաև ընդհանրապես հարցականի տակ է առնվում արբիտրաժի հիմնական (անվիճարկելիության) սկզբունքը:

9- Հոդված 290. Դիմումի քննությունը

1. Օտարերկրյա արբիտրաժային դատարանի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումը քննվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում **դիմումը վարույթ ընդունելու օրվանից երեք ամսվա ընթացքում**, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով:

Տեսակետ. Այս դեպքում ևս երեք ամսվա ժամկետը չափազանց երկար է և չի համապատասխանում արբիտրաժի էությանը, որը սկզբունքորեն նախատեսում է վեճի արագ և վերջնական լուծում:

10- Հոդված 290. Դիմումի քննությունը

4. Գործը քննելիս դատարանը իրավասու չէ վերանայել օտարերկրյա արբիտրաժային դատարանի վճիռն ըստ էության:

Տեսակետ. Սա կարող է սխալ մեկնաբանության առիթ տալ՝ թե ուրեմն ներպետական արբիտրաժային վճիռները ենթակա են ըստ էության քննարկման դատարանի կողմից:

Նման մեկնաբանությունն ամբողջովին հակասում է արբիտրաժի ամենա-առաջնահերթային սկզբունքներին և անհրաժեշտ է թյուր մեկնաբանության առիթ չտալու համար նման նախատեսությունն նաև ավելացնել 41-րդ և 42-րդ գլուխներում, ներպետական արբիտրաժային վճիռների կապակցությամբ:

11- Հոդված 292. Օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման գործով դատարանի որոշումը

5. Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան դրա հրապարակման պահից տասնհինգ օրվա ընթացքում:

Տեսակետ. Այս հոդվածի կապակցությամբ ևս առկա է Վճռաբեկ Դատարան բողոքարկելու հնարավորության հավանականության մասին մտահոգությունը, որը կարող է մեծապես վնասել Հայաստանի միջազգային առևտրական հարաբերություններում արբիտրաժի մասին նախատեսության հնարավորությանը: